ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
(XVI դ.—XIX դ. առաջին կես)

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արևելյան Հայաստանի XVI դ.—XIX դ. առաջին կեսի ագրարային կյանքը լուսաբանող գրականության մեջ ռանչպարությունը բնութագրված է որպես ընչազուրկ գյուղացիների աշխատանք ունևոր տնտեսություններում։ Իսկ ռանչպարների սոցիալ-իրավական վիճակը, նրանց աշխատանքի էությունը ներկայացվում է ամենատարբեր բնորոշումներով՝ վարձու բանվորություն[1]*, առանձին կարգի ճորտություն*[2]*, փաստական ճորտություն, ճորտությանը մոտ վիճակ կամ գյուղացու նկատմամբ ճորտատիրական իրավունքի յուրացում հողատիրոջ կողմից*[3]*, ճորտություն*[4] *(առանց վերապահումների), համարյա ճորտություն կամ կիսաճորտություն՝ իրավաբանական անազատությամբ*[5]*, կիսաճորտություն-սոսկ կոռապարտություն*[6] *և այլն։*

Առաջին բնորոշումը հավաստում է, որ ռանչպարությունը վարձու մշակություն[7] *էր («մշակ» բառի համապատասխան մեկ իմաստով*[8]*)։ Իրարամերժ մյուս մեկնաբանությունները չեն վիճարկվել ու գնահատվել։ Բանավեճը սբրվել է արևելահայ գյուղացիության իրավական դրության հարցի շուրջ, իսկ ռանչպարության բնորոշումները (բացառությամբ վերոհիշյալ առաջինի) կոչված են ամբողջացնելու այդ առթիվ մշակված տարբեր տեսակետները։ Դա էլ շեշտում է մեզ հետաքրքրող խնդրի կարևորությունը լայն նկատառումներով։ Բայց անհրաժեշտ էին տվյալ խնդրի քննության պատմագրական կոնկրետ վերլուծություններ, քանի որ փաստերը գծագրում են ռանչպարների առանձնահատուկ վիճակ, և տնտեսագիտորեն եզակի պատասխան է պահանջում այն*

---

[1] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб, 1852, с. 989; В. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 134—135; *Լեո, Հայոց պատմություն, հ. II, գիրք I, Երևան, 1969, էջ 79,* А. М. Есаян, Мулькадарское право в Армении, Ереван, 1948, с. 45; *Ս. Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII—XVIII դդ. և XIX դ. առաջին քառորդում, Երևան, 1959, էջ 241—242, 245,* А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, с. 206—207.

[2] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв. Л., 1949, с. 248.

[3] В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, с. 47—48, 57—58; *Նույնի՝ Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 68—69, 76—77, 79—80։*

[4] Ц. П. Агаян, Крестьянская реформа в Азербайджане в 1870 г., Баку, 1956, с. 83—88, 101—104.

[5] М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957, с. 56—59.

[6] *Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 46—48։*

[7] *Մշակության մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 649—651. հ. III, Երևան, 1976, էջ 250, 253, հ. IV, Երևան, 1972, էջ 69։*

[8] *«Մշակի» և «ռանչպարի» բազմիմաստ գործառումների մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1980, № 7, էջ 62—69։*

հարցը, թե ի դեմս նրանց ի՞նչ բնույթի աշխատանք էր օգտագործվում ունևոր տնտեսություններում։ Վերջապես, առաջադրվել են դրույթներ, որոնք ոչ միայն անհարիր են ընչազուրկների վերաբերմամբ, այլև հանգեցնում են ամբողջ գյուղացիության իրավական դրության թյուր պատկերացումների։

Անվիճելի է, որ ընչազուրկ ռանչպարները, ի տարբերություն ռայաթների, չէին մտնում գյուղական համայնքի կազմի մեջ, աշխատում էին բացառապես իրենց տերերի տնտեսություններում[9] (նրանց արտադրամիջոցներով), ուստի չունեին համայնիկի իրավունքներ ու պարտականություններ[10]։ Արտադրողների որոշ մասն այդ վիճակին անցնում էր սոցիալական շահագործման ճնշման տակ (կամ աննպաստ այլ հանգամանքներում)՝ կորցնելով ինքնուրույն պարզ վերարտադրության հնարավորությունները։ Տեսադաշտում պահելով այս անառարկելի եզրակացությունները, նախ, անդրադառնանք ռանչպարների հարկատվության հարցին։ Հիշենք, որ Արևելյան Հայաստանում, տարաբնակ ռանչպարներից բացի, կային (Երևանի և Ղարաբաղի խանություններում) զուտ ռանչպարական գյուղեր[11]։ XIX դ. սկզբին Երևանի խանությունում այդպիսիք վեցն էին՝ մուլքադարական (մասնատիրական, մզկիթապատկան) և խանական[12]։

Վ. Ռշտունին նշել է, որ խանական ռանչպարներն ազատ էին հարկից և այս դեպքում սկզբնաղբյուրների տվյալներն «իրարամերժ չեն»[13]։ Մասնատիրական ռանչպարները մերթ հիշատակվում են իբրև հարկատու, մերթ՝ ապահարկված և, ըստ Վ. Ռշտունու, հնարավոր չէ ստուգել տեղեկությունների ճշտությունը[14]։ Ընդ որում, սրանց նա ներկայացրել է երկու խմբով. գյուղեր կառավարող բեգերի մոտ աշխատելու համար խանի կողմից «առանձնացված ռանչպարներ» և «իրենց հողերից զրկված ու այդպիսով ռանչպար դարձած գյուղացիներ»[15]։

Մեր համոզմամբ սկզբնաղբյուրներում հակասականություն չկա. հանդիպում են «ռանչպարի» չտարորոշված (ժամանակին հասկանալի) տարիմաստ գործադրումներ։ Մասնատիրական ռանչպարների շարքում կային և՛ խանների կողմից առանձնաշնորհված ընչազուրկներ (արքունի գյուղերում սեփական տնտեսություն չունեցողներ)[16], և՛ բեգերի մոտ աշխատանքի կարգագրված համայնիկ-բանվորներ։ Վերջիններս հիշատակվում են որպես պետական հարկից մասամբ կամ ամբողջովին «ազատվածներ», բայց դա պետք է հասկանալ այն իմաստով, որ բնեղեն կամ դրամավճար հարկաբաժինը փոխակերպվել էր աշխատավճարի՝ հօգուտ մասնատիրոջ[17]։ Տարաբնույթ տվյալները ճիշտ չի ընթերցել նաև Ի. Պետրուշևսկին՝ «ռանչպար» անվան տակ դիտելով միայն համայնքի կազմի մեջ չմտնող ընչազուրկներին և բնավարձակալ-յարիքյարներին[18]։ Այստեղից էլ նրա անորոշ ձևակերպումները՝ ռանչպարները «երբեմն

9 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248, 249, 316, 317։

10 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 233։

11 Նույն տեղում, էջ 233, 235, 237—239։ Ռանչպարների թվաքանակի մասին տվյալներ չկան։ Ս. Ս. Մարկոսյանի հաշվումներով 1820-ական թվականների վերջերին Երևանի խանությունում նրանցից գանձված հարկաբաժինը կազմում էր սարդարի տարեկան հացամթերային եկամտի 5%-ից ոչ ավելին (նույն տեղում, էջ 240—241)։

12 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 19։

13 В. Рштуни. Крестьянская реформа в Армении в 1870 г., с. 57.

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 56։

16 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею» (այսուհետև՝ АКАК), т. VII, Тифлис, 1878, с. 431 (док. 373).

17 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններին», 1960, № 7, էջ 65—67։

18 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 248, 309—310, 316։ Բնավարձակալությունն ավելի տարածված երևույթ էր՝ բնորոշ և՛ տակավազոր յարիքյար-կիսրարներին, և՛, կա-

(բայց ոչ միշտ)» կամ «դեռ XVIII դ. մեծ մասամբ ազատ էին արքունի հարկերից»[19]։

Ընչազուրկ-ռանչպարները սկզբնաղբյուրներում հանդես են գալիս որպես ոչ-հարկատուներ, ինչը չի համապատասխանում իրականությանը[20]։ Ըստ Ս. Մարկոսյանի, եթե խանական ռանչպարական գյուղերի բերքի մի բաժինը իրանի եկամուտն էր (մյուսը՝ 1/3-ը, երբեմն 1/4-ը, ռանչպարի հասանելիքը[21]), ապա մուլքադարական ռանչպարական գյուղերի հավելյալ արդյունքի մի մասը մնում էր մուլքադարին, մյուսն անցնում էր պետությանը՝ մուլքատիրոջ տընտեսությունից գանձվող հարկի հետ[22]։ Այլուրեք աշխատող ռանչպարները նույնպես անմիջականորեն հարկատու չէին, բայց նրանց «հավելյալ արդյունքի մի մասն անցնում էր պետությանը՝ կալվածատիրոջ (առհասարակ՝ տնտեսատիրոջ—Ս. Ա.) միջոցով»[23]։ Ուրեմն, առաջներում ճիշտ է նկատվել, որ կար «ռանչպարների վրա ընկած հարկ»[24], բայց շահագործման բովանդակությունը թյուրըմբռնվել է երևութականի արձանագրմամբ՝ որպես թե այդ հարկը «վճարում էին նրանց տերերը»[25]։ Կարևորելով Ս. Մարկոսյանի բացատրությունը, նշենք միայն, որ տիրունի տնտեսությունները հենված չէին լոկ ընչազուրկների աշխատանքի վրա, ինչպես կարծել է նա[26]։

«Ռանչպար» տերմինի միանշանակ ընթերցումը հանգեցրել է գյուղացիության իրավական դրությանը վերաբերող անհիմն եզրակացություններ։ Ըստ Ի. Պետրուշևսկու, «ռանչպարների (իբրև առանձին կարգի ճորտ գյուղացիների) կադրերը համալրվում էին ոչ միայն «այլերկրացիներով» և ժառանգական ռանչպարներով։ Խանի հասարակ հրամանով ամեն մի ռայաթ կարող էր դառնալ ռանչպար և նվիրվել այս կամ այն ծառայող մարդուն»[27]։ Այսպիսով, ամփոփել է հեղինակը, գյուղացիների «պատկանելիությունն իրենց տերերից անձնական կախման մեջ գտնվող... ռանչպարների խմբին բխում էր կա՛մ [նրանց] ժառանգական դրությունից, կա՛մ խանական հրամանից»[28]։ Խոսքը, անշուշտ, միայն ընչազուրկների մասին է, որոնց այդ արտասովոր, «առանձին կարգի» ճորտությունը Ի. Պետրուշևսկին մեկնաբանել է իբրև «անձնական (և ոչ թե հողակալությամբ պայմանավորված) կախում»[29]։ Ժառանգականությունը, որպես ռանչպարության իրավակազմի հատկանիշ կամ առաջացման աղբյուր, փաստարկված չէ, այդ բովանդակությամբ տվյալներ չկան, չնայած կարող ենք ասել, որ ծանր կենսապայմանները ռանչպարների ժառանգներին դատապարտելու էին նույն չարքաշ վիճակին։ Այս վերապահումով թերևս կարելի է մասամբ համաձայնել Ի. Պետրուշևսկու հետ[30]։ Բայց հնարավոր չէ պատկերաց-

---

րիքի դեպքում, ինքնուրույն տնտեսատեր բահրաքյարներին, իսկ «ռանչպարդ» տերմինը գործածական էր յարիքյարների ու բահրաքյարների վերաբերմամբ լայն իմաստով (երկրագործ, բանվոր), ապա՝ գյուղացու աշխատանքային՝ «ռանչպարական», պարտության նշանակությամբ։

19 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 318, 249։

20 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 237։

21 Н. Шопен, նշվ. աշխ., էջ 989, В. Иваненко, նշվ. աշխ., էջ 135, «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 19։ Այգեգործ ռանչպարներից ոմանք վարձատրվում էին դրամով (А. Д. Папазян, նշվ. աշխ., էջ 207)։

22 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 237—241։

23 Նույն տեղում, էջ 237։

24 В. Иваненко, նշվ. աշխ., էջ 135։

25 Նույն տեղում։

26 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 243—246։ Մեր նկատառումներն այս առթիվ տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Վերաբեր հասարակական գիտություններին», 1980, № 7, էջ 68—70։

27 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 316։

28 Նույն տեղում, էջ 315, 316։

29 Նույն տեղում, էջ 248։

30 «Այլերկրացիությունը» նույնպես ռանչպարների շարքերի համալրման աղբյուր չէր։ Քանի դեռ նկատի չունենք կոնկրետ բնակատեղ՝ կարող ենք առհասարակ խոսել ընչազուրկների շարժման մասին։ «Այլերկրացիներով» նոր բնակավայրում ռանչպարների շարքերի համալրումը

նել, որ ռանչպարությունը սկզբնավորվում, «բխում էր խանական հրամանից», այլապես պիտի կարծել, թե ռայաթների իրավական դրության հարցի շուրջ ծավալված բանավեճը լուրջ հիմքեր չուներ, բավական էր միայն արձանագրել, որ ամեն մի գյուղացի հրամանով կարող էր ունեզրկվել, համայնքից հանվել ու դառնալ առանձին կարգի ճորտ։ Նման արտառոց եզրակացությունը կարելի է կանխել՝ «ռանչպար» անվան տակ տեսնելով վերոհիշյալ տարբեր կարգի գյուղացիներին՝ նրանց վերաբերող փաստերի տրամաբանված մեկնաբանությամբ։

Խանի հրամանը պաշտոնական կարգադրություն էր, և ցանկացած դեպքում ամեն մի ռայաթի «առանձնաշնորհումն անձնական կախման»[31] Ի. Պետրուշևսկին դիտել է իբրև ժամանակի իրավահարաբերությունների համակարգին բնորոշ կանոն՝ ուշադրության առնելով նաև կամայական շեղումներն այդ կանոնից։ «Ռայաթներին և իլյաթներին անձնապես կախյալ մարդ ու բեգերին սպասավոր դարձնելը,— գրել է նա,— կարող էր լինել ոչ միայն խանական հրամանագրի, այլև բեգերի ուղղակի բռնությունների արդյունք»[32]։ Այս առթիվ վկայակոչված փաստաթղթից բերենք քաղվածքներ՝ այնպես, ինչպես վերապատմել է Ի. Պետրուշևսկին. «Իրանը կառավարող Քերիմ խան Զենդին (1750—1779) ուղղված խնդրագրով [1768/9 թ.], Նախիջևան երկրամասի հողագործներն ու բոչվորները (ռայաթներն ու իլյաթները)... բողոքել են, որ «մեր նշանավոր մարդիկ ռայաթներից և իլյաթներից ոմանց տարան և դարձրին իրենց ղուլամներ, չեն թողնում նրանց մնալ ռայաթների և իլյաթների զբաղմունքին (այսինքն՝ հողագործության և անասնապահության—Ի. Պ.)»։ Բողոքելով բեգերի բռնությունների դեմ, գանգատավորները գրել են. «երբեք չի եղել, որ ռայաթը ղուլամ դառնա» և խնդրել են «բարեհաճել տալ արդարամիտ հրաման, որպեսզի այսուհետև ռայաթներին և իլյաթներին ղուլամներ ու մուլազիմներ չդարձնեն։ Ղուլամ թող լինի նա, ով եղել է՝ կա՛մ հորից մնացածը (նրա ժառանգը—Ս. Ա.), կա՛մ ոսկով գնվածը, կա՛մ այլերկրացին»[33]։

Հազիվ թե տվյալ բողոքի պատճառը գյուղացիներին առ այդ անծանոթ դեպք էր։ Բիրտ կամայականություններն անհարիր չէին բռնապետական միջավայրին։ Բայց վավերագիրը հուշում է մտաբերել ավելի կարևոր հանգամանք. բռնություններին դիմակայելիս աշխատավորները հենվել են սովորութական իրավունքի վրա, որը կայունանում էր որոշակի արտադրահարաբերու-

---

կնշանակեր նրանց շարքերի նոսրացում նախկին բնակավայրում։ Մինչդեռ, ամենուր կար սոցիալական երևույթի շարունակական առաջացման (համալրման) ներքին աղբյուր։ Ի դեպ, Ի. Հասանովը տեղեկացնում է, որ Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվում պահվող Ի. Պետրուշևսկու մի ձեռագիր աշխատությունում քննված են ռանչպարության հետ կապված հարցերը՝ ընդհուպ մինչև «նրա լիկվիդացումը 70-ական թվականներին» (И. М. Гасанов, Из истории феодальных отношений в Азербайджане. Ранджбары в XIX веке («Труды института истории и философии АН Азербайджанской ССР», т. IX, Баку, 1956, с. 28): Իր՝ Ի. Հասանովի համոզմամբ ռանչպարության լուծարքումը նախանշվեց 1846 թ. ռեսկրիպտով (նույն տեղում, էջ 76), որի համաձայն ռանչպարներն անցնում էին պետական գյուղացիների շարքը, իսկ եթե տերերը չէին ցանկանում այդ՝ պետք է նրանց տային բաժնեհողերը։ Մենք ավելորդ կհամարեինք այն հարցը, թե որքա՞ն կկանխվեր ռանչպարության առաջացումը հիշյալ «նախանշումից» մինչև նրա «լուծարքման» կարծեցյալ ավարտը (1870-ական թվականներ), եթե նույնիսկ այդ միջոցին եղած ռանչպարները բաժնեհող ստանային։ Կարելի է փոսել հողատերերի և գյուղացիության տարբեր խմբերի փոխհարաբերությունների ցարական «կարգավորման» անվերջանալի փորձերի մասին։ Ռանչպարության՝ իբրև գյուղացիների որոշ մասի շարունակական ընդարձակման, «լուծարքում» կամ ինչ-որ չափի կասեցում վարչականորեն երբևէ չէր կարող նախանշվել, ոչ էլ՝ ավարտվել XIX դ. 70-ական թվականների կառավարական «բարեփոխություններով»։

31 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 318։

32 Նույն տեղում, էջ 320։

33 Նույն տեղում։

թյունների հիմնաշենքի վրա։ «Այն պրիմիտիվ ու անզարգացած պայմաններում, որոնց վրա խարսխված է արտադրության այս հասարակական հարաբերությունն ու սրան համապատասխանող արտադրության եղանակը,— գրել է Կ. Մարքսը,— ավանդությունը պետք է գերակշռող դեր խաղա...»[34]։ Իսկ գերակշռող ավանդականն այլ բան չէր, քան՝ «արտադրության յուրաքանչյուր եղանակի հասարակական կայունացման ու, հետևաբար, նրա հարաբերական աղատագրման ձևը հասարակ պատահականությունից ու քմահաճույքից...։ Եթե տվյալ ձևը հարատևել է մի առժամանակ, ապա նա ամրապնդվում է իբրև սովորույթ ու ավանդություն և, վերջապես, սրբագործվում է իբրև դրական օրենք»[35]։

Վերոհիշյալ բողոքարկուների փաստարկը՝ գերակշռող ավանդականը, եթե այլաբերենք Ի. Պետրուշևսկու ձևակերպումներով, կհնչեր այսպես. սովորույթ չէ, որ ռայաթները հրամանով ընչազրկվեն, դառնան առանձին կարգի ճորտ-սպասավոր։ Խանի հրամանով,համայնքից «ռանչպար» պահանջելու բեղական իրավունքի հիման վրա (այդ իրավունքը, ինչպես նշված է Ի. Պետրուշևսկու վկայակոչած մեկ այլ փաստաթղթում, կարող էր կենսագործվել «վերադասի թույլտվությամբ»)[36] ռայաթը կարգագրվում էր աշխատանքային պարտույթի և դուրս չէր մնում համայնքի կազմից։ Այլ կերպ չենք կարող բացատրել թե՛ վերադասի թույլտվությունը (ո՞րն էր, ուրեմն, ճորտատիրոջ իրավունքը), թե՛ այն փաստը, որ բեգերը դժկամությամբ ծառայող «ռանչպարներին» (ռայաթ-բանվորներին) հաճախ «փոխարինում էին նորերով»[37], որից հետո նախորդներն անցնում էին համայնիկի իրենց պարտավորություններին[38]։ Չի կարելի այստեղ դիտել ինչ-որ «ճորտափոխանակություն» համայնքի հաշվին՝ գյուղացուն մի կացությունից մեկ այլի (ընչազուրկի) հրամանագրելով։ Սակայն, վերոհիշյալ բողոքագրում խոսքը ռանչպարների մասին էլ չէ. արձանագրված է մի վիճակ, երբ մարդիկ կտրվել են երկրագործությունից, դարձել ղուլամներ, մուլազիմներ։ Ըստ Ի. Պետրուշևսկու, «ղուլամը» («ստրուկ», «զինվորական ծառա») օգտագործվել է երկու իմաստով. «1) սպասավոր, անձնապես և ժառանգաբար կախյալ մարդ, 2) դրամագին-ստրուկ կամ գերի (այլերկրացի)»[39]։ Մուլազիմը նույնպես «զինվորական ծառա» էր, «թիկնազորային»[40]։ Բոլոր սրանց, ռանչպարների հետ միասին, Ի. Պետրուշևսկին ներկայացրել է «անձնապես կախյալ մարդիկ»[41] բնորոշմամբ՝ համահարթելով տարաբնույթ փաստեր, երևույթներ։

«Համաձայն շարիաթի,— գրել է Ի. Պետրուշևսկին,— գերեվարված մուսուլմանը չէր կարող ստրկացվել...։ Բայց, համենայն դեպս, շարիաթը ևս չէր խոչընդոտում խանությունից-խանություն զինվորների ներխուժման ժամանակ այնտեղից տանել գերիներ ու դարձնել իրենց ռանչպարներ: 1790 թ. Ղուբայի խան Ահմեդը Հաջի-Չելեբի էֆենդուն շնորհել է երկու շիրվանցու...։ Շիրվանցիները Ղուբայի խանությունում կարող էին լինել կա՛մ փախստականներ, կա՛մ գերիներ»[42]։ Նշելով, որ Հաջի-Չելեբուն իրավունք էր տրված

34 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 331։

35 Նույն տեղում, էջ 331—332։

36 Ղուբայի պարեսի 1817 թ. մի կարգադրություն է, ուր բեգերին «ռանչպար» տալը հիշվում է համայնքի սովորական հարկային պարտավորությունների շարքում («Колониальная политика Российского царизма в Азербайджане», ч. I, М.—Л., 1936, с. 458).

37 Նույն տեղում, էջ 328։

38 Այդ մասին տե՛ս նաև С. Авалиани, Крестьянский вопрос в Закавказье, т. III, Одесса, 1914, с. 151; Ц. П. Агаян, նշվ. աշխ., էջ 101—102։

39 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 320։

40 Նույն տեղում։ Ավելի ամբողջական են «ղուլամ» և «մուլազիմ» տերմինների՝ Հ. Դ. Փափազյանի բացատրությունները (տե՛ս «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», II, Երևան, 1959, էջ 222, 224—225)։

41 И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 320։

42 Նույն տեղում, էջ 316 (ընդգծումները մերն են—Ս. Ա.)։

երկու շիրվանցուն վերաբնակեցնել, հեղինակն ամփոփել է. «Ի տարբերություն ռայաթ-համայնիկների, որոնց կարելի էր վերաբնակեցնել միայն ամբողջական համայնքներով, տերերն իրենց հայեցողությամբ կարող էին ռանչպարներին վերաբնակեցնել գյուղից-գյուղ»[43]։ Այս «փաստարկը» ձևականորեն էլ ավելորդ էր, որովհետև ըստ Ի. Պետրուշևսկու, ռայաթի և ռանչպարի ողջ տարբերությունը կարող էր ի չիք լինել խանի մի հրամանով։ Հարկավ, գերեվարվածներից, ոսկով գնվածներից ու նրանց ժառանգներից ոմանք կարող էին դառնալ «զինվորական ծառա», ղուլամ, մուլազիմ (ինչպես հավաստում է նաև նախիջևանցիների հիշյալ բողոքագիրը), ոմանք՝ լծվել ռանչպարության։ Բայց ռազմագերու կամ դրամագին սպասավորի և տեղաբնիկ կամ դրսեկ ռանչպարի համար ընդհանուրը լոկ միատեսակ աշխատանքը կարող էր լինել։ Առաջիններին վերաբնակեցման, նվիրաբերման, վաճառքի իրավաբանական հիմքը գերությունն էր, դրամագին-անձնական պատկանելիությունը։ Ռանչպարներին վերաբնակեցնելն ու «նվիրաբերելն» ինքնօրինակ իրողություններ էին, որոնց ստույգ մեկնաբանությունը պահանջում էր ուշադրության առնել բոլոր սկզբնաղբյուր-տվյալները։ Ի. Պետրուշևսկին ռանչպարների ճորտությունն ապացուցելու նպատակով, շատ բան է շրջանցել, ինչը հարմար կլիներ այսպեսհայ գյուղացիությանը վերաբերող նրա նույնիմաստ տեսակետին, չնայած հիշյալ «փաստարկումներով» նա, կարծես, ռանչպարությունը պետք է նույնացներ ստրկության հետ։ Բայց ուշագրավ է, որ Ի. Պետրուշևսկու եզրակացություններում կոնկրետ նկատառում չկա ռանչպարների իրավաբանական անազատության մասին։ Այդուհանդերձ նա ամփոփել է. «Խանական հրամանագրերի համադրությունը XIX դ. արխիվային փաստաթղթերին ցույց է տալիս, որ ռանչպարներն ամրացվում էին ոչ թե հողին, այլ իրենց տիրոջ անձին»[44]։

Խանական հրամանագրերը (որոնք քաղվածաբար վկայաբերել է Ի. Պետրուշևսկին) ռանչպարներին պարտավորեցնում էին հնազանդության և ազդարարում ռանչպարատիրոջ իրավունքի անձեռնմխելիությունը՝ երբեմն, իրոք, ընչազուրկ պետական գյուղացիներին տեղափոխելու թույլտվությամբ[45]։ Այսքանով չենք կարող եզրակացնել, թե մարդիկ անպայման ու անվերադարձ շնորհվում էին անձնական կախման՝ իբրև ճորտ։ Չենք էլ կարող ասել, թե ովքե՞ր էին կամովին ռանչպարության անցածները, նախկինում ո՞ւմ ճորտերն էին, ամենուրեք իրավական ի՞նչ սկզբունքով էին տեղափոխվում ու դառնում մեկ ուրիշի ճորտ՝ եթե նկատի ունենանք, որ, ըստ Ի. Պետրուշևսկու, Հայաստանում գյուղացիության ամրացումը հողին՝ ավարտվել էր XIII—XV դդ.[46] ու նրան «դժվար» է թվացել բացատրել XVI—XVIII դդ. և «նույնիսկ XIX դ. սկզբին դեռ չճորտացված, փոքր թվով ազատ գյուղական համայնքների»[47] առկայությունն այնտեղ։ Այս ելակետից կամ պիտի ենթադրեինք, թե ընչազուրկների շարքերը մշտապես համալրում էին սահմանափակ թվով համայնքներ կամ՝ ռանչպարները նույն տերերի ընչազրկված ճորտերն էին, ինչպես մեսյաչնիկներն[48] ու դարպասայինները Ռուսաստանում։ Բայց բավական է հիշել,

43 Նույն տեղում, էջ 317։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում, էջ 319։

46 Նույն տեղում, էջ 88։

47 Նույն տեղում, էջ 232, 240։

48 Ի դեպ, ռանչպարների փաստական դրության առումով, Վ. Ռշտունին հնարավոր է գտել «նրանց հավասարեցնել» Ռուսաստանի հյուսիսային նահանգների «փաստորեն ճորտ» կիսարարներին (В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г. с. 57—58), ապա՝ ակնարկել է «քիչ տարբերություն» ռանչպարի և XIX դ. առաջին կեսի ճորտ-մեսյաչնիկի միջև (Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, էջ 68)։ Մեր կարծիքով, հարմար է ձեռնպահ մնալ նման զուգահեռներից՝ չմոռանալով, որ այդ գյուղացիների փաստական վիճակը ձևավորվում էր տարբեր միջավայրերում՝ հողային, սոցիալական, նաև իրավական որոշակի հարաբերությունների, տնտեսական կենցաղի, նույնիսկ մարդկանց սոցիալական հոգեբանության տարբերություններով։

որ ռանչպար-մշակ աշխատեցնելը դասային արտոնություն չէր, նույնիսկ չէր պահանջում վավերացում, եթե այն կապ չուներ պաշտոնական առանձնաշնորհման հետ։ Անդրկովկասի «մուսուլմանական պրովինցիաների կարգավորման կոմիտեի» 1831 թ. մի զեկուցագրում կարդում ենք. «Տերերը չեն կարող ունենալ փաստաթղթեր ռանչպար-եկվորների վերաբերյալ, քանի որ նրանց բնակեցրել են պրովինցիայում (Երևանի— Ս. Ա.) գործող ընդհանուր իրավունքով, և այստեղ հիմք պետք է ընդունել լոկ մարդու խոստովանությունը, որ ինքն այսինչի ռանչպարն է, և հարևանների ցուցմունքը։ Բայց խաների կողմից առանձնաշնորհված ռանչպարների մասին պետք է լինեն խանական թալաններ, իսկ ռայաթներից կամովին ռանչպար դարձածների մասին՝ իրենց կնքած գործարքները։ Երկրորդ կարգի գյուղացիների առթիվ պետք է լինեն փաստաթղթեր միայն հողերի վերաբերյալ, որովհետև ամեն ոք կարող էր իր հողին բնակեցնել ցանկացող եկվորին ու քոչվորին՝ առանց որևէ թույլատվության»[49]։ XIX դ. այլ փաստաթղթերից (որոնց մի մասը հրապարակել է Ի. Պետրուշևսկին) և գրականությունից տեղեկանում ենք. ա) «Բեգերը սեփական ծառայությունների համար օգտագործում էին դրան կամովին համաձայնած մարդկանց. սարդարի ժամանակ նրանք չէին կարող հարկադրանքով որևէ մեկին ծառայության պահել...։ Վաճառքի իրավունք տրվում էր միայն ռանչպարների կամ նրանց տերերի կողմից պատրաստված անշարժ կայքի նկատմամբ, որի հետ ուրիշներին էր փոխանցվում նաև ռանչպարը»[50]։ բ) Մասնավոր գործարքով ռանչպարության անցած տեղաբնիկների ու ներեկների և արքունի գյուղերում «սեփական նստակեցություն (տնտեսություն— Ս. Ա.)» չունեցող առանձնաշնորհված ռանչպարների «վիճակը նույնն» էր, և «այդ մարդիկ անձնապես ոչ որի չէին կարող նվիրաբերվել կամ վաճառվել»[51]։ գ) Հողերի տիրակալման փոփոխմամբ (նաև ժառանգական փոխանցմամբ) նոր տերերին էին անցնում նաև «ռանչպարների պարտականությունները»[52]։ դ) Վ. Իվանենկոն նշել է, որ ռանչպարների նվիրաբերումը հազվադեպ չէր. խաներն ու բեգերը կանոն էին դարձրել նրանց իրենց մերձավորներին ծառայության տալը, բայց ռանչպարների վաճառքն ու գրավ դնելը չէր թույլատրվում[53]։

Մ. Ադոնցը, վկայաբերելով վերջին երկու կետում ամփոփված տվյալները, նշելով Վ. Իվանենկոյի «ինքնահակասումը» (չկար ճորտային իրավունք, բայց առկա էր գյուղացու օտարման մի ձևը՝ նվիրաբերումը, բացառված էր մյուսը՝ վաճառքը), ռանչպարներին բնորոշ է համարել «իրավաբանական անազատությունը»[54]։ Նրա կարծիքով, ճորտության և ռանչպարության («կիսաճորտության») տարբերություններից մեկն այն էր, որ «նրանք (ճորտերը—Ս. Ա.) ամրացված էին հողին, իսկ ռանչպարները՝ արտոնյալ դասի առանձին ներկայացուցիչներին»[55] և քանի որ կար հողի առուծախ՝ «հողի հետ միասին կարող էին վաճառել նրա վրա ապրող ռանչպարներին»[56]։ Մենք դժվարանում ենք պատկերացնել հողին չամրացված մարդու վաճառք՝ հողի հետ միասին։ Տվյալ դեպքում Մ. Ադոնցն ակնարկել է ճորտային իրավունքի ձևական բացակայությունը[57], իսկ հետագայում անվերապահորեն պնդել, որ Արևելյան Հայաստանում ճորտատիրություն գոյություն չուներ. «գյուղացին օրենքով ամրացված չէր հողին, նա անպատիժ (ուրեմն, նաև փաստորեն—Ս. Ա.) կարող էր տե-

---

49 АКАК, т. VII, с. 432 (док. 373).

50 Նույն տեղում, էջ 430—431։

51 Նույն տեղում, էջ 430, 432։

52 «Колониальная политика российского царизма в Азербайджане», ч. II, М.—Л., 1936, с. 104.

53 В. Иваненко, նշվ. աշխ., էջ 134—135, հմմտ. АКАК, т. VII, с. 431.

54 М. А. Адонц, նշվ. աշխ., էջ 56—59։

55 Նույն տեղում, էջ 58։

56 Նույն տեղում։

57 Նույն տեղում։

ղափոխվել...»[58]։ Ընդունելով այս վերջին իրավացի պնդումը (մի կողմ թողած ձևակերպումը տեղափոխման «անպատժելիության» մասին), մնում է ենթադրել, որ ռանչպարների իրավաբանական անազատությունը ինչ-որ բացառիկ մասնակի իրողություն էր։ Բայց նման ենթադրության համար հիմք չունենք, մինչդեռ գյուղացու իրավաբանական անազատությունը, անձնական կախումն օրենքով՝ իրավաբանական հիմնարկ էր։ Ըստ ամենայնի ճիշտ կլիներ ռանչպարներին վերաբերող դրույթները ևս վերանայել՝ ելակետ ընդունելով Մ. Ադոնցի դիտողությունը «ճորտատիրության» բացակայության[59] մասին։ Ըստ Ս. Մարկոսյանի, «նվիրաբերման», փոխանցման առարկան ոչ թե անձամբ ռանչպարն էր՝ իբրև հողին կամ հողատիրոջն ամրացվածի, այլ՝ նրա աշխատանքային պարտավորությունը[60]։ Ուրեմն «նվիրաբերումը» հավաստող, բայց գյուղացու օտարման մյուս ձևը՝ վաճառքը, բացասող սկզբնաղբյուրները հակասական չեն։ Վաճառված հողի հետ ռանչպարի փոխանցվելը մի բան է, հողի հետ միասին կամ հողից անջատ նրան վաճառելը (ինչը վկայող փաստեր չունենք)՝ այլ բան[61], Փոխանցման բոլոր գործարքներում իրավաբանական հարկադրանք չկար[62]։ Ընչաղուրկներն անտարբեր էին նման գործարքների նկատմամբ, քանի որ նրանց համար միևնույն էր, թե ում մոտ են աշխատելու[63]։

Ընդգծենք, որ տերերը կարող էին վաճառել ռանչպարների և իրենց կողմից (համատեղ) պատրաստված անշարժ կայքը՝ նորամշակ հողն ու այգին, տնամերձը, նույնիսկ բանվորի կացարանը։ Դա նշանակում է, որ տիրոջն էր պատկանում անշարժ ունեցվածքի այն բաժինը ևս, որի բարեկարգումն ու արդյունաբերումը հետևանք էր ռանչպարի առարկայացած աշխատանքի։ Իրավաբանորեն բացառված չէր, որ ռանչպարը կարող էր հեռանալ ձեռնունայն[64], լավագույն դեպքում՝ որոշ շարժական ինչքով։ Այս պարագան մի կողմից, ամենուր սպասվող հավասար պայմաններն ու իշխողների կամայականությունները՝ մյուս կողմից, փաստորեն, ռանչպարին գամում էին նստավայրին։ Նրա ինքնակամ տեղափոխման և տնտեսատեր համայնիկ դառնալու իրավական հնարավորությունը, իբրև կանոն, մնում էր անկենսագործելի։ Այս առումով ռանչպարների վերաբերմամբ ևս կարող ենք ասել, որ գյուղացու «կյանքը իրավաբանական... շրջանակների կողքով էր անցնում»[65]։

Սակայն մեզ հետաքրքրող սոցիալական երևույթը բնորոշելիս անհրաժեշտ էր նկատի ունենալ, նախ, ռանչպարի աշխատանքի բնույթը, ապա՝ այն

---

58 *Մ. Հ. Ադոնց*, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 50։

59 Անշուշտ, Մ. Ադոնցն այստեղ չի ակնարկել ճորտատիրության բացակայություն՝ լայն առումով, քանի որ «ճորտատիրություն» արտահայտությունը կիրառելի է նաև ընդհանրապես «մինչկապիտալիստական ճորտատիրական հասարակական կարգի» համար (*Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ. 6, էջ 294)։

60 *Ս. Ս. Մարկոսյան*, նշվ. աշխ., էջ 236։

61 Այս առթիվ հարկ է հիշել մի կարևոր երևակացություն, որը մեր համոզմամբ վերաբերելի է նաև ռանչպարներին. XVI—XVIII դդ. «մուլքերի առուծախին և նվիրատվությանը վերաբերող արձանագրություններում և կալվածագրերում հիշատակվում են սեփականության ենթակա ամեն ինչ, բացի հողագործ ռայաթներից» (*Հ. Դ. Փափազյան*, Ռայաթների իրավական ազատության հարցը Արևելյան Հայաստանում 16—18-րդ դդ. և շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը («Լրաբեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971, էջ 128)։

62 *Ս. Ս. Մարկոսյան*, նշվ. աշխ., էջ 236։

63 Նույն տեղում։

64 Այդ մասին տե՛ս նաև՝ «Օրինադրություն արտասահմանից գաղթածների վերաբերյալ» (հոդված 5), որը կազմվել էր 1819 թ. Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովի՝ «տեղական հանգամանքներին համապատասխանեցված» նախագծով (АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1877, с. 6 (док. 7).

65 *Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ. 3, էջ 109։

կարևոր հանգամանքը, որ ռանչպարությունն ինքնուրույն հողօգտագործում չէր։ Հավելյալ արժեքին համընկնող ռենտայի նախնական ձևի՝ կոռի, դեպքում «արտադրողի հենց իրեն համար կատարած աշխատանքը դեռ տարածապես ու ժամանակապես անջատված է հողատիրոջ համար կատարած աշխատանքից»[66]։ Այս պարագայում, նայած ռենտայի բարձրությանը, բանվորը, այդ թվում և՝ «ինքն իրեն պահող ճորտը», կարող էր նույնիսկ «ավելցուկ ձեռք բերել իր անհրաժեշտ գոյամիջոցներից վեր»[67]։ Սա մեկն էր արտադրողների ֆեոդալական կախման ձևերից, երբ «անմիջական բանվորն իր սեփական գոյամիջոցներն արտադրելու համար անհրաժեշտ արտադրության միջոցների «տերն» է մնում... ինքնուրույնորեն է վարում թե՛ երկրագործությունը, թե՛ որա հետ զուգորդված գյուղական-տնային արդյունաբերությունը»[68]։ Ներկա դեպքում այդպիսի անջատման մասին խոսելը կլիներ վերացական, քանի որ ռանչպարն իրեն տրամադրված արտադրամիջոցների «տերը» չէր մնում, երկրագործությունն ինքնուրույն չէր վարում։ Նրա «անշարժ ձեռքբերումները» սկզբից ևեթ անժամկետ գույքային կանխավճար էին, աշխատանքի անհրաժեշտ պայման։ Դա էր հիմքը, մի կողմից, ձեռնունայն կամ որոշ շարժական ինչքով հեռանալու նրա իրավունքի ու չտարորոշված պարտավորությունների, մյուս կողմից՝ «անշարժ ձեռքբերումներն» օտարելու հողատիրոջ իրավունքի։ Այս դրությունը տարբեր էր ճորտությունից, կիսաճորտությունից ու կոռապարտությունից՝ ըստ էության։ Ուրեմն, թե՛ տեսական, թե՛ փաստական առումով ճիշտ ենք համարում այն պնդումը, որ ռանչպարությունը վարձու աշխատանք էր։ Ընդ որում, արտադրողի ցածր վարձաչափը, նրա աշխատանքի հարկադրական բնույթը ինքնին չեն կարող փաստարկ ճանաչվել նրա սոցիալական դեմքը գիտականորեն որոշելու համար, չնայած և՝ հարմար են այլևայլ պատկերավոր համեմատություններին։ Բացառված չէ, որ ֆեոդալիզմի դարաշրջանում հողից չկտրված անձնապես ազատ վարձու բանվորի աշխատանքը «հաճախ այս կամ այն չափով հարկադրական լիներ»[69], իսկ վարձը քիչ տարբերվեր նույնիսկ հողատիրոջ անազատ սպասավորների վաստակից[70]։ Բայց դա հիմք չի տվել տարբեր երևույթների, սոցիալ-իրավական տարբեր կացությունների նույնացման։

Ռանչպարների շահագործման բնույթը ֆեոդալական էր. նրանց հավելյալ արդյունքը արտատնտեսական հարկադրանքով, անմիջականորեն, յուրացվում էր որպես ֆեոդալական հարկ-ռենտա։ Մեր առջև տիրոջի անձնական տնտեսությունն է, որտեղ հողատերն անմիջապես ամշակումը վարում է իր հաշվին, արտադրության բոլոր միջոցների տերն է և շահագործում է բատրակների աշխատանքը, որոնք կարող են լինել անազատ թե ազատ, բնամատակարարմամբ կամ փողով վարձատրվող»[71] և որքանով որ այստեղ «ո՛չ արտադրության բուն իսկ կապիտալիստական եղանակ գոյություն ունի, ոչ էլ սրան համապատասխանող պատկերացում... հավելյալ արժեքը հանդես է գալիս իբրև ռենտա»[72]։ Այլ հարց է, որ մեզ հետաքրքրող պայմաններում ռենտան ընդունել էր հարկի ձև, իսկ հողատերը տնտեսությունը վարում էր հարկատվության սկզբունքով (եթե հատուկ արտոնագրով ապահարկված չէր)։ Ինչպես տեսանք, բնամատակարարմամբ ու մասամբ էլ փողով վարձատրվող անձնապես ազատ ռանչպարների հավելյալ արդյունքի մի մասն անցնում էր պետությանը՝ տնտեսատիրոջ միջոցով։ Այսպիսով, ռանչպարը փաստորեն և իրավաբանորեն կոռապարտ

66 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, էջ 330։

67 Նույն տեղում, էջ 328։

68 Նույն տեղում։

69 Е. А. Косминский, Проблемы английского феодализма и историографии средних веков, М., 1963, с. 134.

70 Նույն տեղում։

71 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, էջ 342։

72 Նույն տեղում, էջ 343։

ճորտ, «համարյա» ճորտ կամ կիսաճորտ չէր, ոչ էլ՝ հողից «ազատված» արտադրող։ Նա ինքնուրույն պարզ վերարտադրության հնարավորությունից զուրկ երկրագործ բանվոր էր, ռանչպար՝ իրեն առանձնահատուկ վիճակով։ Ռանչպարությունը պայմանական-անժամկետ վարձու աշխատանք էր՝ արտադրողների ֆեոդալական շահագործման յուրօրինակ մի ձև Արևելյան Հայաստանում։ Ս. Մարկոսյանի կարծիքով, ռանչպարներին «փաստորեն կալվածատիրական հողին ամրացնելու» պայմաններ ստեղծվեցին XIX դ. երկրորդ տասնամյակների վերջերից[73]։ Այսուհանդերձ, որևէ ակնարկ չանելով ռանչպարների ճորտացման մասին՝ նա նկատի է ունեցել նրանց ինքնակամ տեղափոխման «տնտեսական սահմանափակումը»[74] (անշարժ ունեցվածքը թողնելու, բնակեցման հետ կապված ծախսերը տիրոջը հատուցելու պայմանը), որը մեր համոզմամբ նոր չէր, այլ բնորոշ էր նաև նախորդ (խանական տիրապետության) ժամանակաշրջանին։

СОЦИАЛЬНО-ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ РАНЧПАРОВ (XVI—первая половина XIX вв.)

САМВЕЛ АЛЕКСАНЯН

Резюме

В исторической литературе имеются различные определения социально-правового положения особой категории крестьян Восточной Армении—ранчпаров. Всесторонний анализ данных первоисточников показывает необоснованность утверждений об их крепостном, полукрепостном, «фактически крепостном» или «почти крепостном» состоянии. Ряд исследователей правильно характеризует ранчпарство как наемный труд. Ранчпары—лишенные средств производства и самостоятельного землепользования сельскохозяйственные рабочие по бессрочному найму—находились в *своеобразном* социально-правовом положении. Феодальная суть их эксплуатации, как отмечал С. Маркосян, проявлялась в непосредственном присвоении хозяином доли их прибавочного продукта, другая же часть этого продукта, вместе с налогом, взыскиваемым с господского хозяйства, поступала в казну. Мнение об освобождении или частичном освобождении ранчпаров от налогов—результат поверхностного прочтения первоисточников и однозначного толкования термина «ранчпар». Нелогичны также соображения о будто имевшей место «ликвидации» ранчпарства в 1870-х годах.

---

73 *Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 221։*

74 *Նույն տեղում, էջ 220։*